ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ, Ֆիզիկական գիտությունների թեկնածու

ՆՈՒՆԵ ԴԱՎԹՅԱՆ

«Կրթական ծրագրերի կենտրոն» ՊԻԳ–ի նախադպրոցական կրթության և ավագ դպրոցների ենթածրագրերի ղեկավար

ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդվածում ներկայացված են հանրակրթական հաստատությունների վարկանիշավորման համակարգի ստեղծման և ներդրման հիմնախնդիրները, ինչը մեծ տարածում ունի աշխարհի շատ երկրներում: Այսօր մեզանում էլ, կրթության որակի գնահատման հիմնախնդիրների հետ կապված, դպրոցների վարկանիշավորման համակարգերի ստեղծումը և կիրառումը դարձել է արդիական: Հանրակրթության ոլորտի զարգացման ներկա փուլում հանրակրթական դպրոցների վարկանիշավորման իրականացման անհրաժեշտությունը դարձել է կարևոր խնդիր՝ պայմանավորված դպրոցների գործունեությունն ըստ իրական արդյունքների գնահատման անհրաժեշտությամբ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ դպրոցներ, վարկանիշավորման համակարգ, վարկանիշավորման մեթոդաբանություն, դպրոցների աստիճանակարգում, դպրոցների գործունեության գնահատում, ներքին և արտաքին գնահատում, դասակարգում, ցուցանիշներ:

Կրթական հաստատությունների վարկանիշավորման պատմությունը սկսվում է 1925 թվականից՝ բարձրագույն կրթական հաստատությունների (մասնավորապես համալսարանների) վարկանիշավորմամբ, երբ ամերիկացի պրոֆեսոր Ռայմոնդ Հյուգսը վարկանիշավորեց ԱՄՆ համալսարանների բակալավրական ծրագրերը: Հյուգսի նախաձեռնությունից միայն 60 տարի անց բուհերի վարկանիշավորման գործընթացն ԱՄՆ–ում նոր թափ ստացավ և սկսվեց տարածվել մյուս մայրցամաքներում ու երկրներում: Բուհերի վարկանիշավորման փորձը աստիճանաբար տեղափոխվեց նաև հանրակրթության ոլորտ: Դպրոցների վարկանիշավորման փորձն աշխարհում «երիտասարդ» է և բավական սահմանափակ, իսկ երկրները, որոնցում կան դպրոցների վարկանիշավորման ձևավորված ավանդույթներ, սակավաթիվ են:

Դպրոցների վարկանիշավորման գործընթացները համեմատաբար ավելի մեծ տարածում ունեն ԱՄՆ–ում, Միացյալ Թագավորությունում, Իռլանդիայում, Ավստրալիայում, Սինգապուրում և մի քանի այլ երկրներում: Աշխարհում ավելի տարածված է ավագ և ոչ պետական դպրոցների վարկանիշավորումը:

Հարկ է նշել, որ կրթության որակի գնահատման հիմնախնդիրների հետ կապված, դպրոցների վարկանիշավորման համակարգերի ստեղծումը և կիրա-

ռումը դարձել է արդիական: Բազմաթիվ երկրներում, տարբեր մարմինների կողմից, ստեղծվում և կիրառվում են տարբեր վարկանիշավորման համակարգեր: Բացի այդ, հասարակական հետաքրքրությունը դրանց նկատմամբ ակնհայտորեն աճում է, ինչը բացատրվում է «բոլորի համար որակյալ կրթություն» ապահովելու միջազգային միտումով, կրթության հասանելիության բարձրացման, տարատեսակ կրթական հաստատությունների և մասնավորապես ոչ պետական կրթական հաստատությունների դերի և թվի աճի գործոններով: Այդ գործում կարևոր խթան հանդիսացան նաև սովորողների գիտելիքների գնահատման գործընթացում ստանդարտացված թեստերի կիրառումը և դպրոցի ավարտական և բուհի ընդունելության քննությունների միավորումը: Դրանք թույլ են տալիս գնահատման նույն գործիքով համեմատել ոչ միայն սովորողների կրթական ձեռքբերումները, այլ նաև համեմատել հաստատությունների ուսումնադաստիարակչական գործունեության արդյունքները: Ներկայումս շատ երկրներում էլ դպրոցների վարկանիշավորման համակարգերը մշակման կամ փորձարկման փուլում են:

Այսօր աշխարհում գործող դպրոցների վարկանիշավորման համակարգերը կարելի է տարբերակել իրենց մեթոդաբանությամբ՝ նշելով հետևյալ հիմնական նկատառումները.

1. Վարկանիշավորման համակարգերը հիմնականում ստեղծվում և հրապարակվում են ՁԼՄ–ների, անկախ հասարակական կազմակերպությունների ու այլ կառույցների կողմից՝ աջակցելու շահառուներին դպրոցի ընտրության կատարման գործում:
2. Որոշ երկրներում վարկանիշավորում իրականացնում են կրթության ոլորտի գիտահետազոտական ինստիտուտները՝ վերլուծելով գործունեության ներքին և արտաքին գնահատման արդյունքները և հանրակրթության զարգացման հիմնական միտումները:
3. Որոշ երկրներում վարկանիշավորում իրականացնում են կրթության նախարարությունները կամ համապատասխան պետական կառույցները՝ ելնելով սովորողների ուսումնառության վերջնարդյունքները կամ դպրոցների արտաքին ու ներքին գնահատման արդյունքները ուսումնասիրելու նկատառումից՝ խթանելով հաշվետվողականության մեխանիզմները:

Բոլոր մոտեցումներն էլ, այսպես թե այնպես, հանգեցնում են դպրոցների համադրմանը և համեմատությանը: Վերլուծելով դպրոցների վարկանիշավորման բնագավառում միջազգային փորձն, անհրաժեշտ է դիտարկել ուղենիշային և հիմնարար սկզբունքների շրջանակը: Այդ սկզբունքները կարելի բաժանել հետևյալ 4 հիմնական խմբի.

1. Առաջին խմբում ներկայացված են վարկանիշավորման նպատակներին վերաբերող հիմնական սկզբունքները.
   - Վարկանիշավորումը ընդամենը մեկ գործիք է ուսումնական հաստատությունների գործունեության և վերջնարդյունքների գնահատման մոտեցումների բազմազանության մեջ:
   - Վարկանիշավորումը պետք է լինի միանշանակ՝ իր նպատակի և թիրախային խմբի տեսանկյունից: Շատ ժամանակ մեկ թիրախային խմբի համար ստեղծված վարկանիշային համակարգը կիրառելի չէ մեկ այլ խմբի համար, իսկ որևէ

նպատակով ստեղծված համակարգը և հետևաբար դպրոցների վարկանիշային ցուցակները կարող են էապես տարբերվել այլ նպատակով ստեղծված համակարգից: Այսինքն, վարկանիշավորում իրականացնելիս հստակ պետք է ձևակերպել վարկանիշավորման նպատակը և արդյունքների հրապարակման ժամանակ առաջնորդվել դրանով:

- Վարկանիշավորումը պետք է հաշվի առնի հաստատությունների առանձնահատկությունները. ինչպես աշխահրագրական տեղակայման, մեծության, կագավիճակի և այլ տարբերության, այնպես էլ կրթական ծրագրերի իրականացման առումով (օրինակ՝ տարրական, հիմնական, ավագ, միջնակարգ): Կարևոր է հաշվի առնել նաև վարկանիշավորման ենթակա հաստատությունների համայնքների սոցիալ–տնտեսական իրավիճակը:

2. Երկրորդ խմբում ներկայացված են վարկանիշավորման ցուցանիշների որոշման և կշիռների սահմանման հիմնական սկզբունքները.
   - Հիմնականում վարկանիշավորման համակարգերը հիմնված են ոչ թե մեկ ցուցանիշի, այլ դրանց ամբողջության վրա: Այլ կերպ ասած, վարկանիշն իրենից ներկայացնում է ցուցիչ (ինդեքս), որը պետք է հենվի որևէ տեսական հայեցակարգի և գիտական մեթոդաբանության վրա: Մինչդեռ ակնհայտ է, որ ցուցանիշների ընտրությունն ու ցուցիչի ստացումը տարբեր երկրներում հաճախ որոշակի տեսական և մեթոդաբանական հիմք չունի, փոխարենն այն իրավիճակային է և ամրագրում է իրերի գոյություն ունեցող վիճակը:
   - Վարկանիշավորման համար կիրառվող ցուցանիշների և չափանիշների ընտրությունը կախված է վարկանիշավորման նպատակից և խնդիրներից:
   - Ցուցանիշները պետք է լինեն հուսալի, հավաստի և համապատասխան սահմանված խնդիրներին:
   - Կարևոր են տարբեր ցուցանիշներին տրված կշիռները, քանի որ մեծ կշիռ ունեցող ցուցանիշը ակնհայտորեն որոշում է այն գործոնը, որը կարևորվել է վարկանիշավորման տեսանկյունից (օրինակ՝ սովորողների ընթացիկ առաջադիմությունը, քննությունների արդյունքները, կրթական մեկ աստիճանից մյուսին անցումը, ներառականությունը, ուսուցիչների որակավորումն ու փորձը և այլն) և կարող է էապես ազդել դպրոցի վարկանիշի վերջնական հաշվարկի վրա: Կշիռների որոշումը կապված է նաև սուբյեկտիվության գործոնի հավասարակշռման անհրաժեշտության հետ, ինչի լուծումն այս պահին միանշանակ տրված չէ գործող վարկանիշավորման համակարգերում:
   - Պետք է ապահովել կիրառված մեթոդաբանության թափանցիկությունը:
   - Հնարավորության դեպքում անհրաժեշտ է արդյունքները չափել՝ համադրելով ներդրումների հետ:
   - Անհրաժեշտ է սահմանափակել տարբեր ցուցանիշների և կշիռների հաճախակի փոփոխությունները, քանի որ դրանք հանգեցնում են մոտեցումների և դպրոցների աստիճանակարգման փոփոխությանը: Հաճախ վարկանիշավորման համակարգերում միևնույն հաստատության վարկանիշը զգալի փոփոխություններ է կրում տարեցտարի, մինչդեռ ակնհայտ է, որ կրթական հաստատություններում նման արա-

գընթաց փոփոխություններն անհնար են:

3. Երրորդ խմբում ներկայացված են ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման և մշակման հիմնական սկզբունքները.
   - Վարկանիշավորման համակարգը պետք է հրապարակայնորեն և հստակ նշի իր տեղեկատվական աղբյուրները: Այս առումով կարևոր է հասկանալ, որ վարկանիշավորման արդյունքները մեծապես կախված են տեղեկատվական աղբյուրների հուսալիությունից և հստակությունից: Անհրաժեշտ է օգտագործել հնարավորինս ստուգված և ճշգրտված տվյալներ ու տեղեկատվություն:
   - Կարելի է օգտագործել միայն այն տվյալները, որոնք հավաքագրվել են տեղեկատվության հավաքագրման գիտական կանոնների համաձայն:
   - Տվյալների հավաքագրման համար անհրաժեշտ է կիրառել հստակ կազմակերպչական մեխանիզմներ՝ վարկանիշավորման հուսալիության բարձրացման համար:
4. Չորրորդ խմբում ներկայացված են վարկանիշավորման արդյունքների ներկայացման հիմնական սկզբունքները.
   - Անհրաժեշտ է ապահովել վարկանիշավորման համար օգտագործված ցուցանիշների, դրանց հաշվարկման մեթոդի, ցուցանիշների կշիռների մատչելիությունը: Դրանք պետք է լինեն հասկանալի սպառողների շրջանում՝ նրանց հնարավորություն տալով ինքնուրույն կատարել եզրակացություններ դպրոցների ընտրության գործում (սա նշանակում է, որ սպառողները պետք է հնարավորություն ունենան ըստ իրենց համար նախընտրելի ցուցանիշի կամ ցուցանիշների խմբի ընտրել լավագույն դպրոցը):
   - Ցանկալի է դպրոցների վարկանիշավորման արդյունքները ներկայացնել ոչ թե յուրաքանչյուր դպրոցին տրված առանձին վարկանիշային միավորով, այլ դպրոցները բաժանել 3 խմբի՝ լավ, միջին, վատ:
   - Վարկանիշավորման արդյունքները հրապարակելիս պետք է լինել շատ զգույշ և հրապարակել նաև վարկանիշավորման նպատակները: Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել սկզբնական արդյունքների ցանկացած անճշտություն և վարկանիշային գնահատման արդյունքները հրապարակել այնպիսի ձևաչափով, որ հնարավոր լինի ուղղել նկատված սխալներն ու անճշտություններն անհապաղ:

Վարկանիշավորման որակյալ համակարգ կարելի է մշակել և ներդնել՝ առաջնորդվելով այս սկզբունքներով: Սակայն, գործող վարկանիշավորման համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս սկզբունքներին հետևելը լուրջ մարտահրավեր է վարկանիշավորման իրականացման գործընթացում և դրանց կիրառումը լուրջ ջանքեր է պահանջում ինչպես ոլորտի կառավարիչներից, այնպես էլ վարկանիշավորման համակարգերը մշակողներից:

Աշխարհի տարբեր երկրների վարկանիշավորման համակարգերի վերլուծության արդյունքում կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները.

- Դպրոցի գործունեության գնահատման և դպրոցի վարկանիշային գնահատականի որոշման միասնական մոտեցում աշխարհում չկա: Յուրաքանչյուր երկիր ունի իր ուրույն մեթոդաբանությունը: Ավելին, տար-

բեր երկրների վարկանիշավորման համակարգերում մոտեցումներն ուրույն են և պայմանավորված են կրթության համակարգերի առանձնահատկություններով: Ակնհայտորեն վարկանիշավորման համակարգերը շատ տարբեր են: Եվ չնայած այն հանգամանքին, որ երկրից երկիր վարկանիշավորման գործընթացի նպատակները, մեխանիզմները, մեթոդաբանությունը և ցուցանիշները տարբեր են, գրեթե բոլոր երկրներում դպրոցների վարկանիշային միավորի որոշման հիմնական գործոնը սովորողների առաջադիմությունն է՝ որոշված պետության կողմից անցկացվող ավարտական քննությունների կամ ստանդարտացված թեստերի արդյունքներով:

- Տարբեր երկրներում պարբերաբար իրականացնող վարկանիշավորումների արդյունքներն օգտագործում են ամենատարբեր նպատակներով: Որոշ երկրներում վարկանիշավորման արդյունքներն օգտագործում են բոլոր դպրոցներում պետական չափորոշիչներին համապատասխան որակյալ կրթություն ապահովելու նպատակով: Ըստ այդմ՝ վարկանիշային բարձր գնահատական ստացած առաջադեմ դպրոցները խրախուսվում կամ պարգևատրվում են պետության կողմից, իսկ թույլ դպրոցներում իրականացվում են կրթության որակի բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրերի ֆինանսավորում: Կան երկրներ, որոնք վարկանիշավորման արդյունքներն օգտագործում են «լավագույն դպրոց» մրցույթների անցկացման համար: Նման պարագայում հրապարակվում է միայն բարձր վարկանիշային միավոր ունեցող դպրոցների ցանկը: Սակայն, հիմնականում վարկանիշավորման արդյունքներն օգտագործվում են հանրությանը դպրոցների գործունեության արդյունքների մասին իրազեկելու, իսկ ծնողներին՝ իրենց երեխաների համար դպրոցի ընտրության հարցում աջակցելու նպատակով:
- Վարկանիշավորում իրականացնող կառույցները հենվում են ճշգրիտ և հավաստի տեղեկատվության ու վիճակագրական տվյալների վրա՝ օգտագործելով այնպիսի ցուցանիշներ, որոնք հնարավոր է արտահայտել թվերով: Այնուհետ, դրանք դառնում են վերջնական գնահատական կամ միավոր: Ուսումնասիրված փորձը ցույց է տալիս, որ բոլոր երկրների վարկանիշավորման ցուցանիշների մեջ առաջնային տեղ են գրավում միջնակարգ կրթության ավարտական փուլերի պետական քննական թեստերի, ընդունելության կամ միասնական քննությունների կամ ստադարտացված թեստերի արդյունքները: Եվ դա օրինաչափ է, քանի որ ուսումնական գործընթացը գնահատվում է վերջնարդյունքներով: Բացի այդ, ավարտական քննությունների կամ թեստերի բովանդակությունը համապատասխանում է պետական չափորոշիչներին և ծրագրերին, այսինքն՝ գնահատվում է պետպատվերի իրականացման մակարդակը առանձին դպրոցներում՝ ապահովելով հետադարձ կապ: Մյուս կողմից, միասնական քննությունների և ստանդարտացված թեստերի արդյունքները ժամանակային, տարածքային ու բովանդակային առումով դպրոցները միմյանց հետ համեմատելու կամ

համադրելու գրեթե միակ օբյեկտիվ գործիքներն են:

- Վարկանիշավորման մեխանիզմների օբյեկտիվության և վստահելիության աստիճանը կախված է ընտրված ցուցանիշներից: Ինչպես վերը նշվել է, գրեթե բոլոր երկրներում կիրառվում են սովորողների ուսումնական առաջընթացը գնահատող օբյեկտիվ և համադրելի ցուցանիշներ, մասնավորապես՝ միջնակարգ կրթության տարբեր մակարդակների ավարտական փուլերի քննությունների կամ ստանդարտացված թեստերի արդյունքները: Սակայն այս մոտեցումը պարունակում է որոշակի ռիսկեր: Կարևոր է ոչ միայն քննությունների կամ թեստերի արդյունքների նկատմամբ սովորողների և ծնողների վստահությունը, այլև հասարակության վերաբերմունքը քննություններն անցկացնող կառույցների նկատմամբ: Ինչ կերպ հասարակությունը վերաբերվում է ուսուցման վերջնարդյունքները գնահատողներին, նույն կերպ էլ վերաբերվում է դրանց հիման վրա կազմված վարկանիշային սանդղակներին:
- Նույնիսկ այն երկրները, որոնք ունեն վարկանիշավորում իրականացնելու ձևավորված ավանդույթներ և փորձ, ամեն տարի կատարելագործում են գործող մեխանիզմները, քանի որ անգամ ամենալավ վարկանիշավորման մեխանիզմներն ունեն թույլ տեղեր: Դրանք պայմանավորված են դպրոցի գնահատման ցուցանիշների ճիշտ ընտրության, տվյալների և տեղեկատվության հավաստիության և այլ գործոններով: Վարկանիշավորման ժամանակ հիմնականում հաշվի չեն առնվում դպրոցի գործունեությունը նկարագրող այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են. դպրոցի «տարիքը», շենքային պայմանները, նյութատեխնիկական հագեցվածությունը, հերթափոխների առկայությունը և այլն, որոնք ակնհայտորեն ազդեցություն ունեն սովորողների առաջադիմության վրա:
- Վարկանիշավորումը որոշ երկրներում կիրառվում է որպես կառավարման գործիք՝ վարկանիշավորման ցուցանիշներն ակնհայտորեն անդրադառնում են դպրոցի գործունեության զարգացման ուղղության վրա և ծառայում «լծակ»՝ դպրոցի հետագա զարգացումը պլանավորելու գործում:
- Հարկ է նշել, որ ցանկացած վարկանիշավորման համակարգ ունի նաև բացասական հետևանքներ: Վարկանիշավորման համակարգերի տարածմանը և զարգացմանը զուգընթաց, դրանց քննադատողների թիվը մեծանում է: Ընդ որում, այդ քննադատությունը հավասարակշռող դեր է կատարում՝ կանխելով վարկանիշավորման արդյունքների վրա կենտրոնանալուց կամ դրանով «չափից դուրս տարվելուց» և խթանում դրանց շարունակական զարգացումն ու պարբերական լրամշակումները: Վարկանիշավորման համակարգերի քննադատողները հիմնականում ուսումնական հաստատությունների ղեկավարներն ու կրթության կազմակերպման գիտական հիմնախնդիրներով զբաղվող ներն են: Հաճախ հնչող քննադատություններից կարևոր է նշել հետևյալները.

– Վարկանիշային աղյուսակների հրապարակումը խորացնում է բևեռա-

ցումը դպրոցների միջև և մեծացնում անհավասարությունները: Այն դպրոցների մի մասի համար ծառայում է որպես գովազդ և «դպրոցի բրենդի տարածում»: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ վարկանիշավորման արդյունքների հրապարակումից հետո շատ էլեկտրոնային կայքեր և ԶԼՄ–ներ սկսում են ակտիվորեն գովազդել «բարձր վարկանիշ» ունեցող դպրոցները և պախարակել «ցածր վարկանիշ» ունեցողներին՝ ստեղծելով այդ դպրոցները հաճախող երեխաների «պիտակավորման» վտանգ: Բացի այդ, քիչ չեն նաև դեպքերը, երբ դպրոցներն իրենց հերթին գումարներ են ծախսում նման գովազդների համար:

– Վարկանիշները սպառնալիք են սոցիալական տեսանկյունից: Պարզ և բացառապես քանակական ցուցանիշների օգտագործումը չի արտահայտում դպրոցի մատուցած կրթության իրական որակը:
– Վարկանիշային աղյուսակների հիմնական նպատակը շատ երկրներում դպրոցի ընտրության համար տեղեկատվության տրամադրումն է ծնողներին, սակայն շատ հաճախ ծնողները բնակության վայրի, ֆինանսական կամ այլ պատճառներով չունեն դպրոցի ընտրության հնարավորություն և կանխակալ վերաբերմունք է ձևավորվում դպրոցի նկատմամբ:

• Ինչպես նշվեց վարկանիշային աղյուսակները հրապարակում են ԶԼՄ–երը, հասարակական կազմակերպությունները, անկախ հետազոտական կենտրոնները, կրթության ոլորտի գիտահետազոտական ինստիտուտները կամ պետական կառույցները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հասարակական վստահություն վայելում են հիմնականում այն ռեյթինգները, որոնք իրականացրել են մասնագիտական անկախ կառույցները:

Դպրոցների դասակարգման և վարկանիշավորման նպատակները և խնդիրները

ՀՀ–ում դպրոցների վարկանիշավորման նպատակներն են.

• նպաստել հանրակրթության որակի բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը,
• խթանել դպրոցների մրցակցությունը՝ ուղղված կրթական ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացմանը,
• բարձրացնել շահառուների՝ սովորողների ու նրանց ծնողների, դպրոցների վարչական ու մանկավարժական աշխատողների, ՀՀ կրթության և գիտության նախարարության և այլ պետական գերատեսչությունների, ինչպես նաև հասարակության իրազեկվածությունը դպրոցների կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի, պետական չափորոշիչներին համապատասխանության և կրթական գործընթացի արդյունավետության վերաբերյալ:

Դպրոցների դասակարգման և վարկանիշավորման իրականացման առանձնահատկությամբ պայմանավորված, այդ գործընթացների խնդիրները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի:

Հասարակական քննարկումների տարբեր հարմար առիթներով ԶԼՄ–երը, հասարակական կազմակերպությունները հրապարակում են ընթացիկ ռեյթինգներ, նրանցում կատարված

տեղաշարժեր, որը ևս հաշվետվողականության մի դրսևորում է:

Խնդիրների առաջին խումբն ուղղված է վարկանիշավորման իրականացման ընթացակարգային հիմնահարցերին, իսկ երկրորդ խումբը՝ դպրոցների դասակարգման և վարկանիշավորման գործընթացի արդյունքների օգտագործմանը:

ՀՀ դպրոցների դասակարգման և վարկանիշավորման համակարգի ներդրման խնդիրներն են.

- Մշակել դպրոցների դասակարգման և վարկանիշավորման իրականացման նպատակով հուսալի, համարժեք չափանիշների և գնահատելի ցուցանիշների այնպիսի համախումբ, որը կտա հավաստի տեղեկատվություն հանրակրթությունում առկա վիճակի և փոփոխությունների միտումների վերաբերյալ:
- Ներդնել դպրոցների վարկանիշավորման գործընթացի իրականացման արժանահավատ, թափանցիկ մեխանիզմեր, որոնք իրենց հերթին կխթանեն դպրոցների ներքին և արտաքին գնահատման մեխանիզմների կատարելագործումը:
- Հնարավորություն տալ դպրոցներին համեմատել «իրենց արդյունքները» այլ դպրոցների արդյունքների հետ, վեր հանել իրենց թույլ և ուժեղ կողմերը, մշակել և իրականացնել իրենց դպրոցների զարգացման ծրագրեր:
- Օգտագործել վարկանիշավորման արդյունքները առանձին դպրոցների բարելավման ծրագրերի, ինչպես նաև համակարգի զարգացման քաղաքականության սկզբունքների մշակման համար:
- Խթանել հասարարական քննարկումները հանրակրթության բարեփոխումների վերաբերյալ:
- Մշակել և ներդնել կրթական գործընթացի մասնակիցներին և հասարակությանն իրազեկման մեխանիզմներ՝ առանձին դպրոցների կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի վերաբերյալ:

Ինչպես ամենուր, այնպես էլ Հայաստանում, դպրոցների վարկանիշավորումը, ըստ էության, դպրոցների գործունեության արդյունքների և համակարգում մրցակցության խթանման գործիք է, որի հիմքում դրված է յուրաքանչյուր դպրոցի գործունեության համալիր գնահատումը՝ կրթության որակի համադրելի ցուցանիշներով: Սակայն ՀՀ–ում վարկանիշավորման նպատակով դպրոցների գործունեության «բացարձակ» գնահատում հնարավոր չէ իրականացնել: Գնահատումը, այս դեպքում, կատարվում է մի այլ դպրոցի գործունեության հետ համեմատելու նպատակով: Հետևաբար, այն պետք է և հնարավոր է իրականացնել միայն նմանատիպ կամ նման հնարավորություններ ունեցող դպրոցների միջև:

Ըստ վարկանիշի դպրոցների աստիճանակարգում կարելի է իրականացնել գծային և ոչ գծային մեթոդով: Գծային մոդելը թույլ է տալիս որոշել տվյալ դպրոցի զբաղեցրած տեղը դպրոցների ընդհանուր սանդղակում՝ հիմնված մեկ ցուցանիշի վրա: Սովորաբար այդ ցուցանիշը առանձին դպրոցների շրջանավարտների հետագա կրթական ձեռքբերումներն են (այսպես ասած հասարակության մեջ այդ դպրոցի «համբավը»), ինչը հասարակությանը թույլ է տալիս այդ ձեռքբերումներն անմիջականորեն կապել դպրոցի գործունեության հետ: Արդյունքում, դպրոցների գծային մոտեցումը տալիս է սուբյեկտիվ և ոչնչով չհիմնավորված տեղեկատվություն, որը սակայն անտեսել չի կարելի:

Համեմատության ավելի նուրբ և ճշգրիտ գործիք է ոչ գծային աստիճա-

նակարգումը, որը հնարավոր է իրականացնել միայն մի շարք ցուցանիշների կիրառմամբ և դպրոցի վերջնական գնահատականի մեջ դրանց կշիռներ տալով: Օրինակ՝ եթե մեկ առանձին ցուցանիշով տվյալ դպրոցը կարող է դպրոցների գծային ցուցակում գրավել n–րդ տեղը, ապա ոչ գծային կամ ինտեգրալ վարկանիշավորման ժամանակ, տարբեր ցուցանիշների արժեքներին համապատասխան կշիռներ տալու արդյունքնում նույն դպրոցը կարող է գրավել մեկ այլ m–րդ տեղ:

Հայաստանում կարելի է կիրառել և ինտեգրալ, և գծային վարկանիշավորում՝ կախված դպրոցների աստիճանակարգման նպատակից: Սակայն առաջարկվում է ոչ գծային՝ ինտեգրալ մոդելը: Դպրոցների համեմատության օբյեկտիվությունը ապահովելու նպատակով առաջարկվում է նաև. նախ կատարել դպրոցների դասակարգում՝ խմբավորել ըստ որոշակի օբյեկտիվ չափանիշների, իսկ այնուհետև համեմատել և համադրել դպրոցները յուրաքանչյուր դասակարգված խմբի ներսում: Դպրոցների համեմատման արդյունքում կկատարվի դպրոցների աստիճանակարգում: Նախընտրելի է, որ խմբերի բաժանման չափանիշները լինեն մեկից ավելի:

Շարունակելի …

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 02.10.2012 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը:
2. «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման» կարգ:
3. «Հանրակրթությունը Հայաստանում 2010–2011 ուսումնական տարում» վիճագրական տեղեկագիր, ՀՀ ԿԳՆ, ԿՏԱԿ, Երևան 2011:
4. Лучшим школам дали гранты. http://www.rg.ru/2011/11/15/shkoli.html
5. Методика рейтингования школ повышенного уровня. © РИА Новости ©Межрегиональная Ассоциация Мониторинга и Статистики Образования, Москва, 2012.
6. Рейтинг лучших московских школ 2011–2012. http://www.schoolotzyv.ru/luchshie–shkoly–moskvy
7. Рейтинг российских школ, лучшие школы, лучшие математические и гуманитарные школы http://www.ucheba.ru/school–rating/
8. Рейтинг школ повышенного уровня восьми регионов России. http://ria.ru/ratings_multimedia/20120214/562296565.html
9. Berlin Principles on Ranking of Higher Education Institutions, http://www.che.de/downloads/Berlin_Principles_IREG_534.pdf
10. **Cromey, A.** (2000). Using student assessment data: What can we learn from schools? Policy Issues, 6. Oak Brook, IL: North Central Regional Educational Laboratory
11. **DiMartino, J.** (1999). The congruence of Breaking Ranks with emerging frameworks of high school reform. Providence, RI: Northeast and Islands Regional Educational Laboratoryat Brown University.
12. High School Rankings, UK
13. http://www.top–schools.co.ukHow does Better Education Australia rank schools? http://betteredu-cation.com.au
14. «Identifying Top–Performing High Schools; Analytical Methodology; Developed for America's Best High Schools Project with U.S. News and World Report»; December 2009/
15. **Mary Ann Lachat**, Data–Driven High School Reform The Breaking Ranks.Model
16. Salmi, Jamil, If Ranking is the Disease, Is Benchmarking the Cure? http://www.unesco.org/pv_obj_cache/pv_obj_id_6F5397FECED78FBA156FA860184A274873C21A00/filename/J.Salmi.pdf

ОБЩАЯ СИСТЕМА СОЗДАНИЯ РЕЙТИНГОВ И МЕТОДИКА РЕЙТИНГОВАНИЯ ДЛЯ ШКОЛ АРМЕНИИ

АРУТЮНЯН КАРИНЕ

Заместитель министра образования и науки РА,
кандидат физических наук

ДАВТЯН НУНЕ

Руководитель проектов дошкольного образования и высшей школы
Центра образовательных программ

В статье представлены основные принципы построения популярных во многих странах мира рейтингов школ, виды рейтингов школ, задачи рейтингования, основные этапы разработки и реализации рейтингования образовательных учреждений,а также цели и задачи рейтингования школ Армении. Показано, как для нынешнего этапа развития среднего образования показатели рейтингования могут служить в качестве «инструмента» для развития школы.

Дата представления статьи: 02.10.2012 г.

ON SOME PROBLEMS OF GENERAL RATING SYSTEM CREATION AND INTRODUCTION IN THE RA SCHOOLS

KARINE HARUTYUNYAN

Deputy Minister of Education and Science of RA,
PhD in Physical Sciences

NUNE DAVTYAN

"Center for Educational Programs" PIU,
Head of Preschool Education and High School
Subcomponents

The article represents the problems of development and implementation of educational institution ranking, which is very popular in many countries around the world, as well as the basis of the school rating principles, the types of school rating, the tasks of rating, the main stages of the development and implementation of rating educational institutions. The aims and objectives of rating schools in the Republic of Armenia are represented in the article.

Article submission date: 02.10.2012